59. *ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, ստորին մասում 3 տող.*



ՅԱ՛ՆՈՒ՛Ն Ա՜Յ. ԵՍ ՍԵՐՈԲՍ ՈՒ ԴԱԻԻԹ ԿԱ|ՆԳՆԵՑԱՔ Զ՛ԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱԻՍՈՒԹԻ. ՄԵԶ ԵՒ ՄԱ|ՒՐ՛Ն ՄԵ՛ՐՈՅ ԵՒ ԶԱԻԱԿԱՑ. ՈՐՔ ԵՐԿՐՊ[ԱԳ]ԻՔ ՅԻՇԵՑԷ[Ք]:

Ծանոթ. *Վերջին 2 տողատեղի սկզբի մասերը ջարդված են։ Ժամանակով մոտ է նախորդին,* XIII *դար։*

Լուսանկ. 20:

60. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, նույն գերեզմանատան մեջ, վրան՝*

Ես Վերտիչայի տէր Խէչումս կանգնեցի խաչս ի փրկութիւն հոգոյ Աբրահամին:

Ծանոթ. *Տապանաքարն այժմ չկա. երեսին քանդակված է եղել ուտելիքների սեղան, կողքին նստած մարդ՝ աջ ձեռին դանակ, ձախում՝ խորոված շամփուր. կողքին թամքած ձի, որի սանձից բռնել է պատանին։*

*Հրատ. Բազմավէպ, Փորձ, 1877, № 4, 312։ Ալիշան, 179,*

## 9. ԱՐԵՆԻ (ԱՐՓԱ)

*Այս գյուղը Վայոց ձորի հին և նշանավոր գյուղերից է։ Այն տեղավորված է Արփա գետի ձորահովտի վերջին կետում, որից հետո գետը մտնում է մի նեղ կիրճի մեջ՝ մինչև Շարուրի դաշտ դուրս գալը։*

*Հնագույն ժամանակներից սկսած, Արփա գետի ձախ ափով անցել է մի բանուկ ճանապարհ, որն Արաքսի հովտից հասնելով մինչև Արփա գյուղը, տեղանքի թելադրանքով՝ հենց այստեղից անցել է նրա աջ ափը և միշտ այդ ափերով շարունակվելով՝ հասել է իր մի ճյուղով մինչև Սևանի ավազանը, մյուս ճյուղով՝ մինչև Զանգեզուր. Արփա գյուղն, այսպիսով, եղել է թե՛ ճանապարհի հանգուցակետ և թե՛ Շարուրի դաշտից Վայոց ձոր մտնող կիրճը փակող ռազմական կետ։ Այս պատճառներով էլ գյուղը շրջապատող բարձունքների վրա հնում շինված են եղել բերդ և ամրոց, որոնց միայն ավերակներն են մնացել։*

*Արփա գյուղը հնում տեղավորված է եղել այժմյան գյուղից կես կիլոմետր արևմուտք գտնվող փոքրիկ բարձրավանդակի վրա, որի ավերակները մնում են՝ արևելքում բարձրացող պարսպանման ժայռերի և արևմուտքից հոսող գետի արանքում։*

*Իր տեղադրության այս կարևոր հատկանիշների շնորհիվ Օրբելյան իշխանները մեծ ուշադրության են արժանացրել Արփա գյուղը և այնտեղ մի շարք կառուցումներ կատարել։ Այսպես՝ Տարսայիճ Օրբելյանը գյուղում շինում է մի «դարպաս» և այն դարձնում իր նստացը. Նույն Տարսայիճի հրամանով Նորավանքի եպիսկոպոս Սարգիսը գյուղի մոտ, Արփա գետի վրա շինում է սրբատաշ քարերով մի հոյակապ և մեծածախ կամուրջ, որի մնացորդները պահպանվել են մինչև այժմ։*

XIII—XIV *դարերում Արփա գյուղը եղել է խիստ այգեշատ. Վայոց ձորի մի շարք հուշարձանների պատերի արձանագրությունների մեջ հիշատակվում է նրա անունը՝ զանազան վանքերին նվիրած այգիների առնչությամբ։*

Արփա գյուղատեղում և նրա շրջակայքում արձանագրություններ ունեցող հուշարձանները հետևյալներն են.

1. Ս. Աստվածածին, եկեղեցի, քառանկյունի հատակագծով գմբեթավոր շենք է. կանգուն է, փլել է միայն գմբեթը՝ 1840 թ. երկրաշարժի ժամանակ։ Շինված է տեղական բաց գույնի քարով, համակ սրբատաշ, մեծ խնամքով և վարպետությամբ՝ 1321 թ.։ Շինության հովանավորողը եղել է սյունյաց եպիսկոպոս Հովհաննեսը, իսկ ճարտարապետը՝ նշանավոր Մոմիկ վարդապետը (արձ. № 61)։

2. Գերեզմանատուն, գտնվում է ս. Աստվածածնի ընդարձակ և չորս կողմից նրան շրջապատող բակում։ Հնում եղել է պարսպապատ և շատ ավելի մեծ թվով խաչքարեր և տապանաքարեր են եղել այստեղ։ Այժմ մնում են երկու-երեք տասնյակ, որոնցից շատերի վրա կան տապանագրեր։

3. Խաչքար, գտնվում է գյուղատեղից արևմուտք «Վարդապետի հողեր» կոչվող հանդում՝ բլրակի վրա։ Ժամանակին եղել է որմնափակ, այժմ քանդված. մնացել է միայն խաչքարը, ընկած տեղում։ Համաձայն արձանագրության կանգնեցվել է 1303 թ. (արձ. № 80)։

**61. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ** եկեղեցու արևմտյան մուտքի վերին կամարի շուրջը։

ԵՍՄՐՅՈՎՆ
ՐԲԵԿԵՂԵՑՈ
ԻՇԽԱՆՆԶԱՐ
ԻԿՆԶԲԻԻԹԷԼ
ՐԶՈՅԳՆԻԻՐԶ
ՈՋԶԱԻԱԿԱԻ
ԲԷՇՔԷՆԻԻՆ
։ԹՎ։
ՄՈՄ
ԻԿ
ՎԱ
ՐԴ
Պ

ՍԻԻՆԵՑՐԱՐՀԷՊԻՍԿՈՊՈՍՇԻՆՈՂՍՈԻ
ՉԵՄ ԵԻՍ··ԻԶԲԱՐԵՊԱՇՏԻՇԽԱՆՑ
ՈՐՆԻՄԶՔԱՋՄԵՆԱՄԱՐՏ
ԴԺՇԽՈԱՓԱՌՔՍԱՍԷ
ԱԽՆՆՈՐԱԲՈՂԽԲ
ՔՆԻԻՐԵԱՆՑ
ԵԻԻԱՆԷԻԻ
։ՉԼ։
ՇԱՐԺ
ԵՂ
Ե
Ի

ԵՍ ՏՐ. ՅՈՎ(Ա)Ն|ԷՍ ԱԻՐՊԵԼ(Ի) ՍԻԻՆԵՑ ԱՐՀԷՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՆՈՂ ՍՈԻ|ՐԲ
ԵԿԵՂԵՑՈ|ՅՍ ՅԻՇԵԼ ԱՂԱՉԵՄ. ԵԻՍ |Ե|Ի ԶԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՑ| ԻՇԽԱՆՆ
ԶԱՐԵ|ԱՆ ՄԵՐՁԱԻ|ՈՐՆ ԻՄ ԶՔԱՋ ՄԵՆԱՄԱՐՏ|ԻԿՆ ԶԲԻԻՐԹԷ(Լ)Ն ԵԻ
Զ|ԴԻԺՇԽՈԱՓԱՌ ՔՍԱՍԷ|Ր ԶՈՅԳՆ ԻԻՐ Զ|ՎԱԽ|ՍԽՆ՝ ՆՈՐԱԲՈՂԽԲ|ՈՋ
ԶԱԻԱԿԱԻՔՆ ԻԻՐԵԱՆՑ| ԲԷՇՔԷՆԻԻՆ ԵԻ ԻԻԱՆԷԻԻՆ|։ ԹՎ. ։ՉԼ։ (1321)
ՇԱՐԺ ԵՂԵԻ. ՄՈՄԻԿ ՎԱՐԴՊ(Ե)Տ(Ի)։

Ծանոթ. Գծագրության մեջ բաց մնացած տեղից մեկ քար ընկած-կորած է. նա իր տեղում չի եղել նաև նախորդ հրատարակիչների ժամանակ։

*Մուտքի կիսակամար քարի վրա քանդակված է աստվածածինը, բազմած աթոռին, Հիսուս մանուկը ձախ ծնկանը, որն իր ձախ ձեռքով բռնել է թղթի փաթեթ, իսկ աջով խաչակնքում է. լուսապսակից վեր գրված է ՅՍ. ՔՍ.*

*Գլաձորի սան այս նշանավոր Մոմիկը մանրանկարիչ, քանդակագործ և ճարտարապետ էր միաժամանակ։ Նրա քարգործական ստեղծագործությունները կենտրոնացած են գլխավորապես Նորավանքում, որոնց վրա նա միշտ ստորագրում է Մոմիկ վարդպետ ձևով. Վարդպետ կոչումը XII—XIII դարերում նշանակում էր ճարտարապետ։ Հավանական է ուրեմն, որ շենքի արձանագրությունը և սրբապատկերները փորագրել է Մոմիկը և ընդհանրապես կառուցող ճարտարապետն է եղել։*

Հրատ. Ջալալեանց, Բ. 213։ Քաջբերունի, Փորձ, 1877.78 № 4 331։ Ալիշան, 181—182։
ՄԱԿ, 160։ Ղաֆադարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, 11—12, Երևան, 1915 թ.։

**62. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ** *եկեղեցու հարավային մուտքի ճակատաքարի վրա, խաչի կողքերին և տակին։*

ԹՎ | ՋԽԸ
ԵՍՄՐԲԱՐՍԵՂԱԿԱՆԿՆԵՑԻ
ՁԽԱՉՍՓՐԿՈՒԹԻՀՈԳՈՅՀԱՐ
ԻՄՍԱՀԱԿԱՅԻՇԵՑԷՔԻՔՍ

ԹՎ. ՋԽԸ։ (1499) ԵՍ ՏՐ. ԲԱՐՍԵՂՍ ԿԱՆԿՆԵՑԻ| ԶԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԻ. ՀՈԳՈՅ ՀԱՒՐ|ԻՄ ՍԱՀԱԿԱՅ, ԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.։

Ծանոթ. *Վերջին տողն այժմ խիստ եղծված է, հիմնել ենք նախկին հրատարակություններին։*

Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1877.78, № 4, 330։ Ալիշան, 182։

**63. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ** *եկեղեցու արևմտյան պատի հյուսիսային մասում 2 տող.*

ՅԻՇԵՑԷՔԻՔՍՋԿԱՐԵՆՆԵՒԶԱՄՈՒՍԻՆՆԻՒՐ
ՋԽՈՅԴԱՆԵՒՈՂՈՐՄ· · · · · ·

ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ. ԶԿԱՐԵՆՆ ԵՒ ԶԱՄՈՒՍԻՆՆ ԻՒՐ|
ԶԽՈՅԴԱՆ ԵՒ ՈՂՈՐՄԻ [ԱՍՍ.ՑԷՔ]

Ծանոթ. *Գծագիրն ստացել ենք Հ. Եղիազարյանից։*

**64. ԽԱՉՔԱՐ**, *խիստ ջարդոտված, ընկած է ս. Աստվածածնի արևմուտքում։*

ԵՍՄ | ԽԻԹ
ԱՐՍ — · · ·
ԹՎ | ՉՂ
·ԻԿԱՆԷՑՈՒՑԿԱՐԴԷՑ
ՅԻՇԵՑԷՑ ՔՍ

ԵՍ ՄԽԻԹ|ԱՐՍ [ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ · · · · · · ·
ՈՐՔ ԿԱՐԴԷՔ| ՅԻՇԵՑԷՔ ՔՍ. ԹՎ. ՉՂ։ (1341)։

Ծանոթ. *Մի տող եղել է վերին նեղ քիվին. այժմ բոլորովին անվերծանելի։ Նույն վիճակումն է նաև մի տող մեջտեղից։*

Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1877/78 № 4, 331։ Ալիշան, 182։

65. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ընկած է ս. Աստվածածնի արևմուտքում. Մնացել է միայն Թվականը։

ԹՎՉՂ

ԹՎ. ՉՂ: (1341)

66. ԽԱՉՔԱՐԻ վերին կեսը ընկած է ս. Աստվածածնի արևմուտքում. խորանի երկու կողմերում մնացել է 3 տող՝ ուռուցիկ տառերով։




ԱԿՈԲ ՆԿԱՐՈՂ. ԹՎ. ՌԸ: (1559):

67. ԽԱՉՔԱՐԻ վերին կեսը. ընկած է ս. Աստվածածնի արևմուտքում. խորանի երկու կողքերին՝ հորիզոնական շրջանակների մեջ. 1 տող.

ԿԶՈՂԱԿ · · ·  ԿԶՂԱԿՈԲ ԿԱԶՄՈՂ ԱԿՈԲ. ԿԱԶՄՈՂ ԱԿՈԲ-

Ծանոթ. Խաչքար շինող վարպետներն իրենց կոչում են կազմող և նկարող հավասար կերպով. ըստ այսմ էլ նույնն է նախորդի հետ և ժամանակակից նրան։

68. ՏԱՊԱՆԱՔԱՐ, գտնվում է ս. աստվածածնի արևմուտքում. հյուսիսային երեսի չորս շրջանակներին։




ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՋԱՒՐՀԱՊԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ՓԻՐԻԲԷԿԻՆ, ԵՂԲԱՐ ՊԱՐՈՆ ՄԷՀՐԱՊԻՆ, ՈՐ ԱՆՄԵՂ ԿՈՏՈՐԵՑԻՆ ԱԽԶՂԱՑ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԵՒ ԹՈՂԻՆ ՍՈՒԳ ԱՆՄԽԻԹԱՐ. ԹՎ. ՌԵ: (1556):

Ծանոթ. Տապանաքարն օրորոցաձև է, նրա հարավային կողմում ժամքած ձիու սանձից բռնել է մի մարդ, որի մյուս ձեռքում մտրակն է։ Կենտրոնում սեղան է, որի վրա դրված են հաց և ամաններ, մատռվակը բռնել է գինու գավը և գավաթներ, իսկ նվագողը սազ է նվագում։ Հյուսիսային կողմում՝ որսի տեսարան է, հեծյալը նիզակով շամփրել է եղջերուին, մի այլ հեծյալ՝ նետ ու աղեղով, կողքին կապարճ և ձեռին թուր, հալածում է եղջերուին, դիմացից մի հետիոտն լարել է աղեղը նույն եղջերուի վրա։

Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1877/78 № 4, 333, Ալիշան, 182։

69. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *ալիտակավուն քարից, օրորոցաձև, հարավային հրեսի երկու շրջանակներին։*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏ ՊՐՆՄԷՀՌԱՊԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՐՈՆ ՄԷՀՐԱՊԻՆ. ԹՎ. ՌԸ: (1559):

Ծանոթ. *Հարավային երեսին հեծյալ՝ կապարճը կողքին և ձեռքին բազե. դիմացը սրնգահար, որը բաղկացած է երեք փողից, երկուսը երկար և երրորդը կարճ։ Դիմացը մարդ և կին՝ ձեռները կրծքներին և երկար ու ծալքավոր շորերով։ Հյուսիսային երեսին՝ թամքած ձի, ոտները կապած, որի սանձը բռնել է մի մարդ. դիմացը ծալապատիկ նստած է մի մարդ, որի առաջ դրված է սփռս՝ մեջը շամփուրներով խորոված. սեղանի վրա գավ և ափսեներ. ապա մատռվակ՝ գավը ձեռին և սեղանակից։ Մի կողմում աղեղ և կապարճ՝ մեջը երեք նետ, ու կացնաձև զենք և բազե։*

Հրատ. *Բաջբերունի, Փորձ, 1877/78 № 4, 332։ Ալիշան, 182։*

70. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *վրան՝*

ԽՉՍՅՇՃԿԷԷԻԷԽԱՆԻՆ ԹՎՌՀԲ

ԽԱՉՍ ՑԻՃԱՏԱԿԷ ՍԻՍԽԱՆԻՆ. ԹՎ. ՌՀԲ: (1623)

Ծանոթ. *Գծագիրն ստացել ենք Հ. Եղիազարյանից։*

Ս. աստվածածնի շրջապատի գերեզմանատան մեջ անցյալներում եղել են նաև հետևյալ տապանագրությունները.

71. **ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ**, *որը գտնվել է արևմտյան կողմում։*

Ես Մեհրապս · · · կանգնեցի զխաչս · · · ուղոյ, թվին ՌԽ:

Հրատ. *Բաջբերունի, Փորձ, 1877/78, № 4, 332։ Ալիշան, 182։*

72. **ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ**, *որը գտնվել է արևմտյան կողմում։*

Ես Մելիքբէկս կանգնեցաւ խաչս պարոն Յակոբին, Նիկողոսին. թվին ՌԸ:

Հրատ. *Բաջբերունի, Փորձ, 1877/78, № 4, 332։ Ալիշան, 182։*

73. **ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ**, *որը գտնվել է արևմտյան կողմում։*

Սուրբ խաչս բարեխաւս Զոհրապին.

Հրատ. *Բաջբերունի, Փորձ, 1877/78, № 4, 332։ Ալիշան, 182։*

74. **ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ**, *որը գտնվել է ս. աստվածածնի հարավային պատի տակ։*

Այս է հանգիստ Բաբին, որ Լ. որդի պարոն Փիրփիբէկին,
եղբայր պարոն Թհերդա ? թվին ՌԺԴ:

Ծանոթ. *Տապանաքարի մի երեսին քանդակված է թամքած ձի, որի սանձից բռնած մարդը մյուս ձեռքով բռնել է գավաթը։ Սեղանի գլխին ծալապատիկ նստած է մորուքավոր մարդը, աջեում՝ ափսեի վրա, շամփուրներով խորոված. կողքին՝ աղեղ, կապարճ և սաղ։*

Հրատ. *Բաջբերունի, Փորձ, 1877/78, № 4, 334, Ալիշան, 182։*

***75. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ**, որը գտնվել է արևելյան կողմում։*

Այս է հանգիստ Թադոսին, որդի տէր Զաքարին,
թոռն Թամադուլին. թվին :ՈԾԻԱ:

Ծանոթ. *Տապանաքարի մի երեսին քանդակված է պատանի. երկու ձեռքերով բռնած գիրքը սեղմել է կրծքին. առջևը հաց, բաժակ, դավ և ծառ՝ ճյուղերին թռչուններ։*

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1877/78, № 4, 335։ Ալիշան, 183։*

***76. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ**, որը գտնվել է արևելյան կողմում։*

Այս է տապան Փիրվէլաթին, որ է որդի Առաքելին. թվին :ՈԾԼԵ:

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1877/78, № 4, 335։ Ալիշան, 183։*

***77. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ**, որը գտնվել է հարավային կողմում։*

Այս է տապան հանգստեան Վառանանին,
որ է որդի Փիրվէլաթին. թվին :ՈԾԽԴ

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1877/78, № 4, 334։ Ալիշան, 182։*

***78. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ**, որը գտնվել է հարավային կողմում։*

Թվին :ՈԾՄԷ: Մատուրի որդի տէր Սվանէսին:

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1877/78, № 4, 335։ Ալիշան, 183։*

***79. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ**, որը գտնվել է արևմտյան կողմում։*

Ես Աղաճանս կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ Աւստին,
Միրաքին և հաւրն Ափրիզոնին և մաւրն . . . .

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1877/78, № 4, 332։ Ալիշան, 182։*

***80. ԽԱՉՔԱՐ**, գեղաքանդակ, հնում եղել է որմնափակ, այժմ ընկած է փլատակների մեջ, Արփա հին գյուղատեղու դիմաց, դետի աջ ափին,* «վարդապետի հող» *կոչված վայրում, բլրի վրա. տակին 5 տող.*



ՅՈՒՍՈՎ ՈՂՈՐՄԱԾԻՆ ԱՅ. ԵՒ ԱՒԺԱՆԴԻ ԱԿՈՒԹԲ. ՏՆ. ԻՄՈՅ
ՏՐ. ՍՏԵՓԱՆՈՍԻ, ԵՍ ՍԱՐԳԻՍ, ՈՐԴԻ ՍՈՂՈՄՈՆԻ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ –
ԱԲԻՔՍ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒ ՄԵԶ ԵՒ
ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ. ԹՎԻՍ :ՉԾԲ: (1303):

Ծանոթ. *Քաջբերունին հուշարձանը տեսել է ամբողջական վիճակում. չորրորդ տողի սկզբում վերծանել է ԱԲԷԺԱ անուն, որը սակայն չի հաստատվում մեր գծագիր պատկերով։*

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1877/78, № 4, 338։ Ալիշան, 184։*